ՆԱԽԱԳԻԾ 35

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

_____ 2011 թվականի N _____-Ն

ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽՈՐԴ ՏԱՐԻՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՆՄՈՒՇԻ ԴԻՊԼՈՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 49-րդ հոդվածի 10-րդ մասին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների նախորդ տարիների շրջանավարտների պետական նմուշի դիպլոմ ստանալու համար ամփոփիչ ատեստավորման քննությունների կազմակերպման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հավելված
ՀՀ կառավարության 2011 թ.
_____-ի N _____ -Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽՈՐԴ ՏԱՐԻՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՆՄՈՒՇԻ ԴԻՊԼՈՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

1. Սույն կարգը սահմանում է ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների նախորդ տարիների շրջանավարտների (այսուհետ՝ շրջանավարտ) պետական նմուշի դիպլոմ ստանալու համար ամփոփիչ ատեստավորման քննություններ հանձնելու ընդհանուր պայմանները:

2. Շրջանավարտների՝ ըստ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի /բակալավր և մագիստրոս/ և մասնագիտությունների ամփոփիչ ատեստավորման քննությունների հանձնումը կազմակերպվում է 2011 թվականից մինչև 2012/2013 ուսումնական տարվա ավարտը:

3. Մագիստրոսի կրթական ծրագրով ամփոփիչ ատեստավորման քննություններին (ավարտական թեզի պաշտպանությանը) կարող են մասնակցել միայն մագիստրոսի ոչ պետական ավարտական փաստաթուղթ (դիպլոմ) և համապատասխան որակավորում ունեցող շրջանավարտները:

4. Շրջանավարտների պետական նմուշի դիպլոմ ստանալու համար ամփոփիչ ատեստավորման քննությունների կազմակերպման և անցկացման նպատակով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարը ստեղծում է ընդունող հանձնաժողով և հաստատում քննությունների կազմակերպման ընթացակարգը:

5. Ամփոփիչ ատեստավորման քննություններ հանձնելու նպատակով շրջանավարտները մինչև տվյալ տարվա ապրիլի 30-ը Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն (այսուհետ՝ նախարարություն) են ներկայացնում՝

1) քննությունների մասնակցության դիմում-հայտ, որը նշված ժամկետի ավարտից հետո փոփոխման ենթակա չէ,

2) ավարտական փաստաթղթի (դիպլոմի) ու ներդիրի (միջուկի) բնօրինակը և պատճենը,

3) անձը հաստատող փաստաթղթի (անձնագիր, զինվորական գրքույկ, փախստականի վկայական, Հայաստանի Հանրապետության հատուկ անձնագիր, կացության վկայական) բնօրինակը և պատճենը,

4) 2 լուսանկար (3Х4 չափսի):

6. Շրջանավարտն ամփոփիչ ատեստավորման քննությունները՝ ըստ մասնագիտությունների և նախարարության սահմանած մասնագիտական-առարկայական ծրագրերի, տվյալ տարվա ամփոփիչ ատեստավորման քննությունների կազմակերպման ժամանակահատվածում հանձնում է պետական կամ հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում, որոնց ցանկը հաստատվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի հրամանով:

7. Սույն կարգի 6-րդ կետում նշված բարձրագույն ուսումնական հաստատությունները քննությունները կազմակերպելու և անցկացնելու նպատակով շրջանավարտից (բացառությամբ՝ <Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին>, <Զինապարտության մասին> և <Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին> ՀՀ օրենքներով սահմանված արտոնություններից օգտվող ՀՀ քաղաքացիների) կարող են գանձել ծառայության վճար:

8. Մագիստրոսի կրթական ծրագրով շրջանավարտների ավարտական թեզի պաշտպանության ժամկետն ընդունող հանձնաժողովի առաջարկությամբ հաստատվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի հրամանով:

9. Տվյալ բուհի համապատասխան մասնագիտության գծով ձևավորվում է մեկ միասնական ամփոփիչ ատեստավորման հանձնաժողով: Դրանք յուրաքանչյուր տարի կազմվում են ըստ կրթական ծրագրերի և մասնագիտությունների՝ ոչ ուշ, քան դրանց

աշխատանքներն սկսվելուց երկու շաբաթ առաջ և գործում են միայն տվյալ ուսումնական տարվա համար նախատեսվող քննաշրջանի ժամկետներում:

10. Յուրաքանչյուր մասնագիտության գծով ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահին (ոչ տվյալ բուհի աշխատակից) և անդամներին նշանակում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարը՝ գիտական կազմակերպությունների, պետական և ոչ պետական հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատությունների գիտական աստիճան և կոչում ունեցող, տվյալ բուհի հաստիքային աշխատողների կազմից:

11. Ամփոփիչ ատեստավորման քննություններն անցկացվում են բանավոր (համապատասխան հարցման թերթում շրջանավարտը պարտադիր գրի է առնում իր պատասխանը):

12. Յուրաքանչյուր առարկայից ամփոփիչ ատեստավորման քննության, ինչպես նաև ավարտական թեզի (դիպլոմային նախագծի) պաշտպանության տևողությունը չպետք է գերազանցի 45 րոպեն: Քննությունների արդյունքները գնահատվում (գերազանց, լավ, բավարար, անբավարար) և հայտարարվում են նույն օրը՝ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստի արձանագրությունը կազմվելուց հետո:

13. Ամփոփիչ ատեստավորման քննություններից դրական գնահատական ստացած (ավարտական թեզը պաշտպանած) շրջանավարտին ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի որոշմամբ շնորհվում է ստացած մասնագիտությանը համապատասխան որակավորում: Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի աշխատանքների ավարտից հետո հանձնաժողովի նախագահը մեկ շաբաթվա ընթացքում հաշվետվություն է ներկայացնում նախարարություն՝ վերջինիս կողմից տվյալների ամփոփման և համապատասխան բուհերի պետական նմուշի դիպլոմի շնորհման (պահպանելով նախկին դիպլոմի ներդիրի ընթացիկ գնահատականները) համար:

14.Ամփոփիչ ատեստավորման քննություններից անբավարար գնահատական ստացած շրջանավարտին նույն ուսումնական տարվա ընթացքում քննությունների վերահանձնում չի թույլատրվում:

Հիմնավորում

«Ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների նախորդ տարիների շրջանավարտների պետական նմուշի դիպլոմ ստանալու համար ամփոփիչ ատեստավորման քննությունների կազմակերպման կարգը հաստատելու մասին»
ՀՀ կառավարության որոշման նախագծի

1. **Անհրաժեշտությունը.**

Հայաստանի Հանրապետության վարչապետի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» հմ.1160-Ա որոշմամբ նախատեսված է «Ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների նախորդ տարիների շրջանավարտների պետական նմուշի դիպլոմ ստանալու համար ամփոփիչ ատեստավորման քննությունների կազմակերպման կարգի» մշակում:

Կարգը նպատակ ունի կանոնակարգելու ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների նախորդ տարիների շրջանավարտների պետական նմուշի դիպլոմ ստանալու համար ամփոփիչ ատեստավորման քննությունների կազմակերպման և անցկացման գործընթացը:

2. **Ընթացիկ իրավիճակը և խնդիրները.**

ՀՀ կառավարության 2003թ. փետրվարի 6-ի հմ. 231-Ն որոշմամբ 2003թ-ից մինչև 2005/2006 ուսումնական տարվա ավարտը ՀՀ բուհերում կազմակերպվել է ոչ պետական բուհերի շրջանավարտների պետական քննությունների հանձնում (դիպլոմային նախագծերի պաշտպանություն), դրական արդյունքի դեպքում պետական նմուշի դիպլոմների տրամադրում: Սակայն շրջանավարտների մի մասը քաղաքից բացակայելու, տեղեկացված չլինելու կամ այլ պատճառներով հնարավորություն չի ունեցել մասնակցելու գործընթացին:

Ամփոփիչ ատեստավորման քննությունների կազմակերպման ավարտից հետո մինչ այժմ նախարարության ստացած բազմաթիվ շրջանավարտների հարցումները հավաստում են նոր գործընթաց սկսելու անհրաժեշտության մասին՝ հաշվի առնելով

այն հանգամանքը, որ շրջանավարտների պետական նմուշի դիպլոմ չունենալու հանգամանքը խոչընդոտում է աշխատաշուկայում նրանց աշխատանքի տեղավորմանը:

Նախագծով հաստատվող հավելվածի 3-րդ կետով նախատեսված ամփոփիչ ատեստավորման քննությունների անցկացման համար շրջանավարտներից հավաքագրվող գումարները՝ յուրաքանչյուր քննության համար հինգ հազարական դրամ, կօգտագործվեն հանձնաժողովների վարձատրության և ծրագրերի, հարցաշարերի, բանավոր հարցման թերթերի տպագրության, գրենական պիտույքների ձեռքբերման համար:

Այսպիսով, գործընթացի իրավական կարգավորումը կնպաստի շրջանավարտների աշխատաշուկայում ընդգրկվելու հնարավորության մեծացմանը:

3. **Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը.**

Բարձրագույն մասնագիտական կրթության բնագավառում իրականացվող քաղաքականությունը միտված է պետական և ոչ պետական բուհերի դիմորդների և ուսանողների համար հավասար պայմանների և իրավունքների ապահովմանը:

4. **Կարգավորման նպատակը և բնույթը.**

Կարգը նպատակ ունի կանոնակարգել ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների նախորդ տարիների շրջանավարտների պետական նմուշի դիպլոմ ստանալու համար ամփոփիչ ատեստավորման քննությունների կազմակերպման գործընթացը և ստեղծելու հավասար հնարավորություններ պետական և ոչ պետական բուհերի նախորդ տարիների շրջանավարտների որակավորումների շնորհման համար:

5. **Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձիք.**

Նախագիծը մշակվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից: Այն քննարկվել է պետական և ոչ պետական բուհերի, ինչպես նաև ՀՀ կրթության և գիտության նախարարի 20.03.2009 թ. հմ. 191-Ա/Ք հրամանով ստեղծված “Կրթության որակի ապահովման”, “Բարձրագույն կրթության որակավորումների համակարգ” հանձնաժողովների կողմից և ներկայացվել է հասարակության քննարկմանը

(տեղադրվել է նախարարության WWW.EDU.AM կայք էջում:)

6. **Ակնկալվող արդյունքը.**

Ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների նախորդ տարիների շրջանավարտներին պետական նմուշի փաստաթուղթ (դիպլոմ) ստանալու կանոնակարգված գործընթացի ձևավորում՝ ոչ պետական բուհերի նախորդ տարիների շրջանավարտների ավարտական փաստաթղթերի (համապատասխան որակավորումների) հետ կապված խնդրի կարգավորում և իրավունքների ապահովում:

Տեղեկանք

ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ պետական կամ տեղական

ինքնակառավարման բյուջեների վրա ազդեցության մասին

Որոշման ընդունման կապակցությամբ պետական բյուջեում կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների էական ավելացումների կամ նվազեցումներ չեն սպասվում:

Տեղեկանք

ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ ընդունվելիք այլ իրավական ակտերի կամ դրանց ընդունման անհրաժեշտության բացակայության մասին

1 ՀՀ կառավարության որոշման նախագծի մասին ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխությունների և/կամ լրացումների անհրաժեշտությունը բացակայում է:

2 ՀՀ կառավարության որոշման նախագիծը չի հակասում միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորություններին:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆԿԱՊԱԿԱՑՈՒԹՅԱՄԲ ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆԸ ԵՎ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1 ՀՀ կառավարության որոշման նախագիծը 12.01.2011թ. տեղադրվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության www.edu.am կայքում

2 Նախագծման աշխատանքներին և քննարկումներին մասնակցել են պետական և ոչ պետական բուհերի, ինչպես նախարարության համապատասխան մասնագետներ:

3 Նախագիծը քննարկվել է ՀՀ կրթության և գիտության նախարարի 20.03.2009թ. հմ. 191-Ա/Ք հրամանով ստեղծված «Կրթության որակի ապահովման», «Բարձրագույն կրթության որակավորումների համակարգ» հանձնաժողովների կողմից:

4 Հասարակությունը նախագծի նախագծմանը և/կամ քննարկումներին չի մասնակցել:

Տեղեկանք

Նախագծի վերաբերյալ ստացված դիտողությունների և առաջարկությունների,

դրանց ընդունման կամ չընդունման վերաբերյալ

Առարկության, առաջարկության հեղինակը, գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացությունն	Կատարված փոփոխությունը
1	2	3	4
ՀՀ ֆինանսների նախարարության 20.01.2011թ. հմ. 1/4.4-3/371-11 գրություն;	1.Նախագծի նախաբանի «10-րդ մասին» բառերը փոխարինել «10-րդ կետին» բառերով: 2.Նախագծով հաստատվող հավելվածի 7-րդ կետով նախատեսված ամփոփիչ ատեստավորման քննությունների կազմակերպման համար շրջանավարտներից գանձվող 5000 դրամ գումարի ուղղվածությունը և վճարի չափի հիմնավորումը:	1.Դիտողությունը չի ընդունվել: 2. Դիտողությունն ընդունվել է: 7-րդ կետը խմբագրվել է:	1. Հարցը կարգավորվում է “Իրավական ակտերի մասին” ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն: 2. 7-րդ կետը խմբագրվել է՝ “Սույն կարգի 6-րդ կետում նշված բարձրագույն ուսումնական հաստատությունները քննությունները կազմակերպելու և անցկացնելու նպատակով շրջանավարտից (բացառությամբ՝ <Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին>, <Զինապարտության մասին> և <Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին> ՀՀ օրենքներով սահմանված արտոնություններից օգտվող ՀՀ քաղաքացիների) կարող են գանձել ծառայության վճար”:
ՀՀ արդարադատության նախարարություն	Առարկություն չկա:		